# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2025 **թվականի** N 1352-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ № 56 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 169.05 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 11.46 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Հովհաննես Սուրենի Խաչատրյանին պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական № 25032025-08-0050) Գյումրի քաղաքի Թումանյան փողոց № 56 հասցեի տան հողամասին կից ավել օգտագործում է 11.46 (տասնմեկ ամբողջ քառասունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 4.98 (չորս ամբողջ իննսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Հովհաննես Սուրենի Խաչատրյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Հովհաննես Սուրենի Խաչատրյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի մարտի 24-ին № 4098 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Հովհաննես Սուրենի Խաչատրյանի (ծնված 1953 թվականի դեկտեմբերի 15-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Թումանյան փողոց № 56 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 11.46 (տասնմեկ ամբողջ քառասունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա առկա 4.98 (չորս ամբողջ իննսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունների նկատմամբ:
2. Քաղաքացի Հովհաննես Սուրենի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Թումանյան փողոց № 56 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 169,05 (մեկ հարյուր վաթսունինը ամբողջ հինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը ճանաչել օրինական:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հովհաննես Սուրենի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-07-08 16:37:29 GMT+4

mID

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հուլիսի 2025 **թվականի** N 1351-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԹԱԴԵՎՈՍ ԱՐՏՈՒՇԻ ՄԱԴՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ. ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ № 64 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 26.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 78.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Թադևոս Արտուշի Մադոյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր № 906) Գյումրի քաղաքի Հ. Մազմանյան փողոց № 64 հասցեի տան հողամասին կից ավել օգտագործվում է 78.1 (յոթանասունութ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է բնակելի շինություններ:

Քաղաքացի Թադևոս Արտուշի Մադոյանը դիմել են Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ իրենց սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի, 22.1-րդ կետի և 18-րդ կետի դ) ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023MN6PUC ծածկագրով մուտքագրման տեղեկանքը և քաղաքացի Թադևոս Արտուշի Մադոյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի փետրվարի 11-ին № 1803 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Թադևոս Արտուշի Մադոյանի (ծնված 1978 թվականի ապրիլի 02-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Հ. Մազմանյան փողոց № 64 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 78.1 (յոթանասունութ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
2. Քաղաքացի Թադևոս Արտուշի Մադոյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հ. Մազմանյան փողոց № 64 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 26.9 (քսանվեց ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 2(երկու) դուռը, ինքնակամ բացված 1 (մեկ) դարպասը և ինքնակամ բացված 1 (մեկ) բացվածքը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 12824 (տասներկու հազար ութ հարյուր քսանչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Թադևոս Արտուշի Մադոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-07-08 16:33:06 GMT+4
Հաստատված է էլեկտրոնային կնքով

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2025 **թվականի** N 1350Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԵՎՈՆ ՄԽԻԹԱՐԻ ՄԱՐԶՊԵՏՈՒՆՈՒ, ԳԵՎՈՐԳ ՄԽԻԹԱՐԻ ՄԱՐԶՊԵՏՈՒՆՈՒ ԵՎ ՀԵՐԻՔՆԱԶ ՎԱՐԴԳԵՍԻ ՄԱՐԶՊԵՏՈՒՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ 90,95 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 198,8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Լալայան փողոցի հարևանությամբ համայնքապատկան հողամասում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է բնակելի շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացիներ Լևոն Մխիթարի Մարզպետունին, Գևորգ Մխիթարի Մարզպետունին և Հերիքնազ Վարդգեսի Մարզպետունին:

Քաղաքացի Լևոն Մխիթարի Մարզպետունին դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի շինության նկատմամբ իրենց սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունները չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով և հիմք ընդունելով քաղաքացի Լևոն Մխիթարի Մարզպետունու դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հուլիսի 03-ին N 9162 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացիներ Լևոն Մխիթարի Մարզպետունու (ծնված 1979 թվականի մարտի 31-ին), Գևորգ Մխիթարի Մարզպետունու (ծնված 1981 թվականի հունվարի 30-ին) և Հերիքնազ Վարդգեսի Մարզպետունու (ծնված 1956 թվականի նոյեմբերի 03-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Լալայան փողոցի հարևանությամբ գտնվող 198,8 (մեկ հարյուր իննսունութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա բնակելի շինությունների նկատմամբ:
2. Գյումրի քաղաքի Լալայան փողոցի հարևանությամբ 92,79 (իննսուներկու ամբողջ յոթանասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա առկա շինությունները թողնել ինքնակամ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Լևոն Մխիթարի Մարզպետունուն պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանիցԳոռ Գևորգի Երիցյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-07-08 15:49:38 GMT+4
Համայնքի ղեկավարի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2025 թվականի N 1349-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ № 71/14 ՀԱՍՑԵԻ 76.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Կամոյի փողոցի № 71/14 հասցեի 76.0 (յոթանասունվեց ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Կամոյի փողոցի № 71/14 հասցեի 76.0 (յոթանասունվեց ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2025թ. ք.Գյումրի

2025.07.08 11:06:45 GMT+4 Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» նոյեմբերի 2025 թվականի N 1348-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ № 24/6 ՀԱՍՑԵԻ 14.01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Մանուկյան փողոցի № 24/5 հասցեի 172.13 (մեկ հարյուր յոթանասուներկու ամբողջ տասներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Վահրամ Կարապետի Մխիթարյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 14082024-08-0023 վկայական):

Քաղաքացի Վահրամ Կարապետի Մխիթարյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 04062025-08-0005 վկայական) Ա. Մանուկյան փողոցի № 24/6 հասցեի 14.01 (տասնչորս ամբողջ մեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 20-ի №52-Ա որոշումը և քաղաքացի Վահրամ Կարապետի Մխիթարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի մարտի 3-ին № 2935 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Վահրամ Կարապետի Մխիթարյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա.Մանուկյան փողոցի № 24/5 հասցեի 172.13 (մեկ հարյուր յոթանասուներկու ամբողջ տասներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով ավտոտնակին հարակից, Ա. Մանուկյան փողոցի № 24/6 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 14.01 (տասնչորս ամբողջ մեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 147301 (մեկ հարյուր քառասունյոթ հազար երեք հարյուր մեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Վահրամ Կարապետի Մխիթարյանի միջոցների հաշվին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վահրամ Կարապետի Մխիթարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-07-08 15:55:59 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2025թ. ք.Գյումրի

Վ . ՂՈՒԿԱՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2025 **թվականի** N1347-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 60,31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 60,31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 46,46 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի հարևանությամբ 60,31 (վաթսուն ամբողջ երեսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 60,31 (վաթսուն ամբողջ երեսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 46,46 (քառասունվեց ամբողջ քառասունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով կիսակառույց բնակելի շինություն, որը տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Լևոն Մխիթարի Մարզպետունին, Գևորգ Մխիթարի Մարզպետունին և Հերիքնազ Վարդգեսի Մարզպետունին:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշման 3-րդ կետի, 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող N 20235VHPAJ տեղեկանքը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի հարևանությամբ 60,31 (վաթսուն ամբողջ երեսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 60,31 (վաթսուն ամբողջ երեսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 46,46 (քառասունվեց ամբողջ քառասունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով կիսակառույց բնակելի շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացիներ Լևոն Մխիթարի Մարզպետունուն, Գևորգ Մխիթարի Մարզպետունուն և Հերիքնազ Վարդգեսի Մարզպետունուն:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-07-08 15:50:58 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**
**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<08>> նոյեմբերի 2025 թվականի N1346-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿԱՐԵՆ ԾԱՌՈՒԿԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Իր ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Ծառուկի Մալխասյանի նկատմամբ կիրառել խրախուսանք միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:
**2.** Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Ծառուկի Մալխասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<08>> հոկտեմբերի 2025 թվականի N 1345-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԱԳԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Իր աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ Գագիկ Գևորգի Մանուկյանի նկատմամբ կիրառել խրախուսանք միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

**2.** Գյումրու համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գագիկ Գևորգի Մանուկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<08>> հուլիսի 2025 թվականի N 1344 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԳՈՀԱՐ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Սյուզաննա Վաղարշակի Հարությունյանի 2025 թվականի հուլիսի 4-ի դիմումը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Գոհար-մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ( այսուհետ՝ կազմակերպություն ) տնօրեն Սյուզաննա Վաղարշակի Հարությունյանին տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի հուլիսի 21-ից:

**2.** Ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2025 թվականի հուլիսի 21-ից մինչև օգոստոսի 22-ը ներառյալ:

**3.** Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Սյուզաննա Վաղարշակի Հարությունյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության մեթոդիստ Սվետլանա Արմենի Գրիգորյանին:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սյուզաննա Վաղարշակի Հարությունյանին և Սվետլանա Արմենի Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հուլիսի 2025 **թվականի** N 1343-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱԹԵԼԼԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ 19 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նաթելլա Մկրտչյանի 2025 թվականի հունիսի 27-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հունիսի 27-ին 8864-2025 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Նաթելլա Մկրտչյանին Գյումրի քաղաքի Սպանդարյան 19 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 0▯75 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի հուլիսի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Նաթելլա Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2025 թվականի № 1342-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ, 5Գ ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ 243,75 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 69,37 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՀԵՍՏԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 01-ի №1263–Ա որոշումը, հողամասի ու շինությունների հատակագծերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Գործարանային փողոց, 5գ հասցեի շինությանը կից 243,75 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 69,37 քառակուսի մետր արտաքին մակերեսով պահեստին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Գործարանային փողոց, 3/2 պահեստ**

2025-07-08 16:43:17 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2025 թվականի №1341-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Ն. ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ 4/4, Ն. ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ 4/16 ԵՎ Ն. ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ 4/17 ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Ն. Ռիժկովի փողոց 4/4 (վկայական №02062025-08-0013), Ն. Ռիժկովի փողոց 4/16 (վկայական №02062025-08-0017) և Ն. Ռիժկովի փողոց 4/17 (վկայական №03072025-08-0007) հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ն. Ռիժկովի փողոց, 4/4 հողամաս**

2025-07-08 15.11.44 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2025 թվականի №1340-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 04–Ի №2868-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի օրենքի 33–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 04–ի «Գյումրի քաղաքի Ղ. Ղուկասյան փողոցի հարևանությամբ գտնվող 268.09 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1010-0084-ից) համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին» №2868-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) վերնագրում և որոշման կայացման մեջ **«268.09»** թիվը փոխարինել **«257.5»** թվով:

2025-07-08 12:07:29 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հոկտեմբերի 2025 **թվականի** N 1339-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՓՈՂՈՑ № 3/7 ՀԱՍՑԵԻ 28.12 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի № 3/7 հասցեի 28.12 (քսանութ ամբողջ տասներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի № 3/7 հասցեի 28.12 (քսանութ ամբողջ տասներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

Восстановимая подпись

X

2025թ. ք.Գյումրի

Подписано: GHUKASYAN VARDAN 3001610840 **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2025 թվականի № 1338-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ 23 ՇԵՆՔ 4/1 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ 69.81 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, շինությունների հատակագիծը ու բնութագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Ղանդիլյան փողոց 23 շենք 4/1 բնակարան հասցեագրությամբ 69.81 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 1-ին նրբանցք, 23 շենք, 4/2 բնակարան**

2025-07-08 09:39:28 GMT+4
Հաստատված է ԷՍԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2025 **թվականի** N 1337-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության սպորտային մարմնամարզության 2025 թվականի հուլիսի 11–14–ը Վանաձոր համայնքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով մարմնամարզության ֆեդերացիայի 2025 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2025 թվականի հուլիսի 8-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության սպորտային մարմնամարզության պատանիների առաջնությանը գործուղման ծախսերի 2025 թվականի հուլիսի 11–14–ը Վանաձոր համայնք գործուղել 10 մարզիկի և 2 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (բոլոր ծախսերը) 19.200(տասնինը հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թ.
__հուլիսի__ __08__ N __1337-Ա__ որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության սպորտային մարմնամարզության պատանիների առաջնությանը **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/ մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ալոյան | Մկրտիչ | մարզիչ | AU 0363486 | 15100044983649 | 1.600 |
| 2. | Սուքիասյան | Եպրաքսյա | մարզիչ | BA 1261140 | 220061474734000 | 1.600 |
| 3. | Մարգարյան | Էդվարդ | մարզիկ | AT 0594825 | 2620365983951001 | 1.600 |
| 4. | Կարոյան<br>Կարոյան | Մկրտիչ<br>Մարիա | Ծնող<br>մարզուհի | AP 0674849 | 2470052821620160 | 1.600 |
| 5. | Գեվորգյան | Արայիկ | մարզիկ | AX 0264017 | 2478901889950000 | 1.600 |
| 6. | Հովհաննիսյան | Արման | մարզիկ | AX 0307635 | 1570009784927800 | 1.600 |
| 7. | Մկրտչյան | Հակոբ | մարզիկ | | 1570027838668300 | 1.600 |
| 8. | Սերոբյան | Սուսաննա | մարզուհի | AL 0288383 | 1570097452490100 | 1.600 |
| 9. | Աշչյան<br>Աշչյան | Նելլի<br>Աղասի | Ծնող<br>մարզիկ | AS 0232066 | 22061477380000 | 1.600 |
| 10. | Դիլանյան | Էրմինա | մարզուհի | AX 0559187 | 1510012633436300 | 1.600 |
| 11. | Բերնեցյան | Հայկ | մարզիկ | AL 0279793 | 1570025670796700 | 1.600 |
| 12. | Գալուստյան | Սոնա | մարզուհի | AX 0300506 | 1510078668596600 | 1.600 |
| Ընդամենը | | | | | | 19.200 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հուլիսի 2025 **թվականի** N 1336-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԵՆԻՍԻ 18 ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԳԱՎԱԹԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության թենիսի 18 տարեկան մեծահասակների 2025 թվականի հուլիսի 19–23–ը Երևան քաղաքում կայանալիք գավաթի առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով թենիսի ֆեդերացիայի 2025 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2025 թվականի հուլիսի 8-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության թենիսի 18 տարեկան մեծահասակների գավաթի առաջնությանը գործուղման ծախսերի 2025 թվականի հուլիսի 19–23–ը Երևան քաղաք գործուղել 2 մարզիկի և 1 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (բոլոր ծախսերը) 139.500(մեկ հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025 թ. ք.Գյումրի**

**Հավելված**

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թ.**
**հունիսի 08 N 1336-Ա որոշման**

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության թենիսի 18 տարեկան մեծահասակների գավաթի առաջնությանը **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/ մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Աղայան | Սամվել | Մարզիկ | AX0292488 | 220540565110000 | **48.000** |
| 2. | Մանուկյան | Մարիաննա | Մարզիկ | AL0234946 | 1570084073530700 | **48.000** |
| 3. | Աղայան | Արմեն | Մարզիչ | AR0563125 | 220543329308000 | **43.500** |
| Ընդամենը | | | | | | **139.500** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2025 **թվականի** N 1335-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի № 2651-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Երկաթ գծի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 26.86 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 26.86 քառակուսի մետր արտաքին (23.4 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» № 2651-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Երկաթ գծի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 26.86 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 26.86 քառակուսի մետր արտաքին (23.4 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» № 2651-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում «26.86 (քսանվեց ամբողջ ութսունվեց հարյուրերրորդական)» թիվը և բառերը փոխարինել «30.1 (երեսուն ամբողջ մեկ տասնորդական)» թվով և բառերով:

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2025 **թվականի** N 1334-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ № 9/11 ՀԱՍՑԵԻ 112.94 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Շիրակացու փողոցի № 11/29 հասցեի 420.8 (չորս հարյուր քսան ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Արթուր Թադևոսի Մալխասյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 17052024-08-0007 վկայական):

Քաղաքացի Արթուր Թադևոսի Մալխասյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 07102024-08-0045 վկայական) Ա. Շիրակացու փողոցի № 9/11 հասցեի 112.94 (մեկ հարյուր տասներկու ամբողջ իննսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 20-ի № 52-Ա որոշումը, քաղաքացի Արթուր Թադևոսի Մալխասյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հոկտեմբերի 03-ին № 16781 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1) Քաղաքացի Արթուր Թադևոսի Մալխասյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Շիրակացու փողոցի № 11/29 հասցեի 420.8 (չորս հարյուր քսան ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Ա. Շիրակացու փողոցի № 9/11 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 112.94 (մեկ հարյուր տասներկու ամբողջ իննսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ընդլայնման նպատակով:
2) Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 771831 (յոթ հարյուր յոթանասունմեկ հազար ութ հարյուր երեսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3) Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4) Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Արթուր Թադևոսի Մալխասյանի միջոցների հաշվին:
5) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արթուր Թադևոսի Մալխասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-07-08 12:18:05 GMT+4
Համաձայնված է էՍՏՈՐԳԻ կողմից
miD

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հուլիսի 2025 թվականի N 1333-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 910-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդականների և օգնականների միջև պարտականությունները բաշխելու և Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 26-ի N 2330-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 910-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի (այսուհետ՝ համայնքի ղեկավար) խորհրդականներն ու օգնականներն իրականացնում են սույն որոշման համապատասխանաբար 2-րդ և 3-րդ կետերով համայնքի ղեկավարի կողմից իրենց վրա դրված պարտականությունները Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝աշխատակազմ) հետևյալ ստորաբաժանումների, համայնքային հիմնարկի և առևտրային կազմակերպությունների գործառույթներին վերաբերող հարցերի շրջանակներում՝

1) Տոնոյան Էդվարդ - համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական.
աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման, քաղաքաշինության և հողօգտագործման, գովազդի բաժիններ
2) Պետրոսյան Աշոտ- համայնքի ղեկավարի խորհրդական.
աշխատակազմի կրթության, ֆիզկուլտուրայի և սպորտի, ծրագրերի և արտաքին կապերի, մշակույթի և երիտասարդության հարցերի, քարտուղարության, տրանսպորտի բաժիններ, «Գյումրու ավտոբուս» և «Հավերժ հիշատակ» փակ բաժնետիրական ընկերություններ,
3) Սիմոնյան Հովսեփ- համայնքի ղեկավարի խորհրդական.

աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, իրավաբանական, բյուջեի եկամուտների հավաքագրման, անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների աշխատանքների համակարգման, բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժիններ,

4) Աղեկյան Լիլիթ- համայնքի ղեկավարի խորհրդական.
աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի, կրթության բաժիններ,

5) Հարությունյան Կոլյա - համայնքի ղեկավարի օգնական.
աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման, ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության, անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների աշխատանքների համակարգման, բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժիններ և «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկ,

6) Գևորգյան Ռուբեն - համայնքի ղեկավարի օգնական.
աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, բյուջեի եկամուտների հավաքագրման, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման, գովազդի բաժիններ, «Բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերություն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդականներին և օգնականներին պաշտոնի իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-07-08 15:41:00 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք. Գյումրի,2025 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«07» հուլիսի 2025 թվականի N 1332-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ 8/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Դավիթ Գրիգորյանի 2025 թվականի հունիսի 27-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հունիսի 27-ին 8862-2025 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Դավիթ Գրիգորյանին Գյումրի քաղաքի Մովսես Խորենացի 8/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի հունիսի 27-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Դավիթ Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Կ.ՄԱԼԽԱՍՅԱՆ

2025 թ. ք.Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» հուլիսի 2025 **թվականի** N 1331-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱԹԵԼԼԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նաթելլա Մկրտչյանի 2025 թվականի հունիսի 27-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հունիսի 27-ին 8866-2025 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Նաթելլա Մկրտչյանին Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա 1/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1□5 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի հուլիսի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Նաթելլա Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-07-04 15:19:23 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» հուլիսի 2025 **թվականի** N 1330-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՅԿԱԶ ՔՅՈՍԱԲԱԲՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՍՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 19/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հայկազ Քյոսաբաբյանի 2025 թվականի հունիսի 30-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հունիսի 30-ին 8970-2025 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հայկազ Քյոսաբաբյանին Գյումրի քաղաքի Հասմիկ Կիրակոսյան 19/5 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի հուլիսի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հայկազ Քյոսաբաբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**